ՀՏԴ 324(479.243) Քաղաքագիտություն

Հրայր Փաշայան
Արցախի Պետական Համալսարանի
փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս,
քաղաքական գիտությունների թեկնածու
E-mail: hrayr.pashayan@mail.ru

Լիանա Բալայան
Ստեփանակերտի համար 2 հիմնական դպրոց

1991-Ի ԼՂՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ ԵՎ ՀԵՏԱՁԳՎԱԾ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԳԱՂԱՓԱՐԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Սեփական կարգավիճակի հստակեցման նպատակով 1991թ. դեկտեմբերի 10-ին ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեից ուղիղ 25 տարի է անցել: Վերլուծելով այդ առթիվ միջազգային անկախ դիտորդների կողմից ընդունված ակտը, հոդվածում ներկայացվել է նրանում առկա իրավաքաղաքական փաստարկները: Դրանք վկայում են, որ հանրաքվեն անցել է միջազգային իրավունքի տարին ու ոգուն համապատասխան, իսկ արցախահայությունն իր կամքն արտահայտել է հօգուտ ազատ ու անկախ ապրելու իրավունքի:

Միաժանակ վերլուծված են «կազանյան» փաստաթղթում ամրագրված «հետաձգված հանրաքվեի» և ազատ կամարտահայտության մասին դրույթները: Յույց է տրվում, որ դրանք փաստորեն ծուղակ են, որոնք ամրագրվել են «մտքում պահած» նպատակների իրականացման համար:

Բանալի բառեր՝ ԼՂՀ անկախության հանրաքվե, կամարտահայտություն, կարգավիճակ, հետաձգված հանրաքվե, իրավաքաղաքական փաստարկներ, Արցախի Հանրապետություն, Ադրբեջանի Հանրապետություն, Ղարաբաղյան հակամարտություն:

Грайр Пашаян
к.п.н.,
АрГУ, кафедра философии и политологии
Лиана Балаян
Школа №2 г.Степанакерта

РЕФЕРЕНДУМ НЕЗАВИСИМОСТИ НКР В 1991 ГОДА И КОНЦЕПЦИЯ ОТЛОЖЕННОГО РЕФЕРЕНДУМА В ПРОЦЕССЕ КАРАБАХСКОГО УРЕГУЛИРОВАНИЯ

25 лет прошло со дня референдума, проведенного 25 декабря 1991 года с целью конкретизации собственного статуса. Анализируя акт, принятый по этому случаю международными независимыми наблюдателями, в статье представлены политико-правовые аргументы, имеющиеся в документе. Они свидетельствуют, что референдум был проведен согласно букве и духу международного права, а армяне Арцаха выразили свою волю в пользу права жить свободно и независимо.

В то же время анализируются принципы "отложенного" референдума и волеизъявления, прописанные в "казанском" документе. Демонстрируется, что они фактически являются ловушкой и были прописаны с целью осуществления "державшихся в уме"целей .

Ключевые слова: референдум о независимости НКР, волеизъявление, статус, отложенный референдум, политико-правовые аргументы, Республика Арцах, Республика Азербайджан, нагорно-карабахский конфликт.

Hrayr Pashayan
Candidate of Political Science, assistant professor,
Department of Philosophy and Political Science , Artsakh State University
Liana Balayan
Teacher in the basic school №2 in Stepanakert

THE REFERENDUM OF THE NKR INDEPENDENCE IN THE 1991 AND THE CONCEPTION OF THE DELAYED REFERENDUM IN THE PROCESS OF THE SETTLEMENT OF KARABAKH CONFLICT

25 years have passed since the referendum held on December 25, 1991 with an aim to determine its own status. Analysing the act adopted by the international independent observers, the jural and political argumentation is presented in the article .They witness that the referendum was held according to the principles of the international law, and that the Armenians of Artsakh expressed their will in favour of the right of free and independent life.

At the same time the principles of "the delayed referendum" fixed in the "Kazan" document have been analysed. It is demonstrated that they are in fact a trap and were written down to achieve the"kept in mind" aims.

Keywords: a referendum on the independence of the NKR, will, the status, a deffered referendum, political and legal argument, the Republic of Artsakh, the republic of Azerbaijan, the Nagorno—Karabakh conflict.

Դեկտեմբերի 10-ին լրանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ սեփական կարգավիճակի հստակեցման նպատակով կազմակերպված հանրապետական հանրաքվեի 25-րդ տարեդարձը: Դրանով, դեռևս գործող ԽՍՀՄ օրենքների և միջազգային իրավունքի տարին ու ոգուն համապատասխան արցախահայությունն արտահայտեց իր կամքը հօգուտ Ազատ ու Անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ հավատարմություն հայտնելով այն սկզբունքներին, որոնք բովանդակում է 1991թ. սեպտեմբերի 2-ին ԼՂՀ հայտարարելու մասին հռչակագիրը[1]: Դա պատմական քայլ էր, որը բխում էր տվյալ ժամանակաշրջանի ռազմական ու քաղաքական իրողություններից, մասնավորապես Արցախի բնակչությանը ադրբեջանական ագրեսիայից պաշտպանելու և բոլոր պետությունների հետ իրավահավասար հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունից[2]:

Այս առթիվ հատկանշական է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվեի արդյունքների վերաբերյալ անկախ դիտորդների կողմից ընդունված ակտը[3], որի վերլուծությունը մի շարք իրավաքաղաքական փաստարկների և եզրահանգումների հիմք են տալիս: Այսպես.

1. Տարբեր երկրներից ժամանած անկախ դիտորդների կողմից ԼՂՀ անկախության հանրաքվեի արդյունքների մասին ընդունած ակտի բովանդակությունն առաջին հերթին կարևորվում է նման քաղաքական իրադարձության անաչառության տեսանկյունից: Դիտորդներն այցելել են ավելի քան 30 ընտրական տեղամասեր[4], ներկա գտնվել ձայների հաշվառմանը և ընդունած ակտում հավաստագրել, որ **«Հանրաքվեի նախապատրաստումը, անցկացումը և արդյունքների ամփոփումն իրականացվել են «ԼՂՀ հանրաքվեի անցկացման մասին ժամանակավոր կանոնակարգին» համապատասխան: Ընտրատարածքների ցուցակը և տարածքային ընտրական հանձնաժողովների հասցեները հրապարակվել են «Խորհրդային Ղարաբաղ» թերթում...»:** Այսինքն՝ դիտորդները փաստել են, որ ընտրությունները կազմակերպվել են դրա համար պահանջվող իրավական նորմերին համահունչ, չնայած **«հանրաքվեն անցկացվում էր ԼՂՀ-ի դեմ զինված ագրեսիայի պայմաններում, որն արտահայտվում էր Ստեփանակերտ քաղաքի և այլ բնակավայրերի տարբեր զինատեսակների կիրառմամբ չընդհատվող հրետակոծությամբ՝ ներառյալ հրթիռներն ու հրետանին»:**

2. Հանրաքվեի կազմակերպման և անցկացման ընթացքում պահպանվել է ԼՂՀ տարածքում բնակվող բոլոր ազգությունների քվեարկությանը մասնակցելու իրավունքներն ու պայմանները: Այդ նպատակով, քվեաթերթիկները կազմվել են երեք՝ հայերեն, «ադրբեջաներեն» և ռուսերեն լեզուներով: Ընդ որում՝ կայազորի միջոցով քվեաթերթիկներն ուղարկվել էին նաև ԼՂՀ ադրբեջանաբնակ վայրերը: Տարաբնույթ ընկալումներից ու մեկնաբանություններից խուսափելու, ինչպես նաև ընտրողներին հստակորեն կողմնորոշելու նպատակով, քվեաթերթիկը պարունակել է **«Համաձայն եք Դուք, որպեսզի հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինի անկախ պետություն ...» հարցը և «ԱՅՈ» ու «ՈՉ» բառերը՝ անցանկալին ջնջել նշումով»:** Այսինքն՝ հանրաքվեի կազմակերպման և անցկացման հիմքում գերակայել է ժողովրդի կամքի արտահայտությունը, որը հանդիսանում է ազգերի ինքնորոշման՝ ինքնուրույն պետություն ստեղծելու ժամանակակից աշխարհի կարևորագույն չափանիշը:

3. Անկախ դիտորդներն իրենց կողմից ընդունված ակտում անհրաժեշտ են համարել նշելու, որ. **«Դիտորդների կողմից չեն հայտնաբերվել քվեարկության արարողակարգի, քվեաթերթիկների տրման, դրանց ձևակերպման, ձայների հաշվման խախտումներ»:** Այս բոլորը հիմք են հանդիսացել նրանց կողմից տրված եզրահանգման համար, ըստ որի. **«Ելնելով քվեարկության արդյունքներից և նկատի ունենալով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և միջազգային ակտերի դրույթները՝ անկախ դիտորդները հայտարարում են. ԼՂՀ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՁԱՅՆԵՐԻ ՃՆՇՈՂ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼ Է ԼՂՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕԳՏԻՆ»[5]:** Այսինքն՝ անկախ դիտորդները փաստել են, որ հանրաքվեն համապատասխանել է և՛ տվյալ ժամանակ երկրում գործող ներպետական իրավական ակտերին, և՛ մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, և՛ միջազգային իրավունքի դրույթներին:

4. Չափազանց կարևոր է, որ հանրաքվեն անցկացվել է մինչև ԼՂՀ-ից ադրբեջանցի թուրքերի հեռանալը, որոնց մի մասը քվեարկությանը չի մասնակցել Բաքվի հրահանգով: Այդուհանդերձ, ադրբեջանական կողմը ԼՂՀ անկախության հանրաքվեին նույնպես ներկայացնում է ինչ-ինչ վերապահումներ, որոնցից առավել «ծանրակշիռն» այն է, որ հանրաքվեին չի մասնակցել ադրբեջանական բնակչությունը: Մինչդեռ՝ ԼՂՀ անկախության հանրաքվեին մասնակցել է 108736 մարդ կամ բնակչության ընտրական իրավունք ունեցողների 82,2 տոկոսը: Քանի որ այդ ժամանակ «ադրբեջանցիները» կազմում էին ԼՂՀ ընտրական իրավունք ունեցող բնակչության մոտ 25 տոկոսը,

---

[1] Այս մասին մանրամասն տես՝ Փաշայան Հ., Բալայան Լ., Արցախի անկախացումը՝ ազգերի ինքնորոշման դասական օրինակ, Գլոբուս, թիվ 7(76), էջ 21-26

[2] Ըստ միջազգայնագետ Զ. Տոդուայի «Բոլոր պետությունները ծնվել են արյամբ: Բայց հետո, որպեսզի չանհետանան, նրանք պետք է ստեղծարար կյանք սկսեն, ստեղծեն տնտեսություն, կառուցեն տներ, ձեռնարկություններ, կազմակերպեն առևտուր, ստեղծեն պայմաններ բնակչության բարեկեցության բարելավման համար: Այլապես, նոր պետության գոյության ժամկետը մեծ չէ...»: Тодуа З., Экспансия исламистов на Кавказе и в Центральной Азии. М., 2006. с. 52.

[3] Статус Нагорного Карабаха в политико-правовых документах и материалах. Ереван, 1995г., с. 85-87.

[4] Ընդհանուր առմամբ ստեղծվել էր 81 ընտրատարածք, որոնցից 11-ում հանրաքվեն չի կայացել (դրանցից 10 ադրբեջանական բնակչությամբ էին, իսկ մյուսը կապված էր հրետակոծության առաջացրած պայմանների հետ) Տես Ակտ՝ 1991թ. դեկտեմբերի 10-ին ԼՂՀ-ում կայացած հանրաքվեի մասին, ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, g. 2, գ. 332, թ. 10-11:

[5] Ընդհանուր առմամբ ընտրության իրավունք ունեցող 132328 մարդուց քվեարկությանը մասնակցել է 108736 մարդ: Քվեարկողներից 108615 մարդ կամ ընտրողների 99,9 տոկոսը կողմ են քվեարկել ԼՂՀ անկախությանը, նշելով «ԱՅՈ», 24 մարդ կամ 0,02 տոկոսը նշել են «ՈՉ», իսկ 95 քվեաթերթ անվավեր է ճանաչվել, որը կազմում է 0,09 տոկոս: Այս և տվյալ ժամանակաշրջանի այլ փաստաթղթերի մասին մանրամասն տես՝ Աբրահամյան Հ., Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991 թ. օգոստոս - 1992 թ. հունվար). Փաստաթղթեր, Երևան 2011:

ապա ակնհայտ է, որ «ադրբեջանցիների» մի մասը նույնպես մասնակցել է հանրաքվեին: Բայց նույնիսկ եթե մի պահ պատկերացնենք, որ բոլոր «ադրբեջանցիները» մասնակցել և դեմ են քվեարկել անկախությանը, ապա այդ դեպքում ևս ակնհայտ է, որ այն հանրաքվեի վերջնական արդյունքների վրա չի կարող ազդեցություն ունենալ: **Հետևաբար, ինչպես հաստատել են մի քանի տասնյակ միջազգային դիտորդներ և օտարերկրյա լրատվամիջոցների ներկայացուցիչներ, հանրաքվեն անցել է անթերի:**

Ինչպես հայտնի է, արդի միջազգային հարաբերությունների կարևորագույն սկզբունքներից մեկը կապված է ազգերի ինքնորոշման իրավունքի հետ, որը տվյալ երկրի բնակչությունն արտահայտում է կամքի ազատ արտահայտման՝ հանրաքվեի միջոցով: Այս առումով բավականին բնութագրական է արևմտյան առաջատար երկրներից մեկի՝ Մեծ Բրիտանիայի ԱԳ նախարար Ռիչյամ Հեյգի հայտարարությունը 2013թ. Ֆոլկլենդյան կղզիներում բնակչության ինքնորոշման նպատակով կազմակերպված հանրաքվեի վերաբերյալ, ըստ որի 21-րդ դարում նախևառաջ պետք է կարևորվի ժողովուրդների ինքնորոշման իրավունքը[1]: Ինչպես արդեն նշվեց, ուղիղ 25 տարի է անցել այն օրից, ինչ արցախահայությունն իր ճակատագիրը տնօրինելու ընտրություն է կատարել, որը հետագայում հաստատվել է 2006թ. համաժողովրդական քվեարկութամբ ընդունած սահմանադրության և բազմաթիվ անգամներ տեղի ունեցած իշխանության մարմինների ընտրությունների ընթացքում: Սակայն պարզվում է, որ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման նպատակով ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից հակամարտող կողմերին ներկայացված հանրությանը հայտնի (ոչ պաշտոնական) տարբերակներում իր ուրույն տեղն է գտել «հետաձգված հանրաքվեի» գաղափարը[2]: Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին և կամարտահայտությանն առնչվող «կազանյան» փաստաթղթում առկա ձևակերպումները հակասում են ոչ միայն հակամարտության իրավական դրույթներին այլև իրականությանն առհասարակ: Փորձենք մանրամասնել ըստ փաստաթղթում ներկայացված դրույթների:

Լեռնային Ղարաբաղի միջանկյալ կարգավիճակ

Մինչև Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի որոշումը, Լեռնային Ղարաբաղը ստանում է միջանկյալ կարգավիճակ, որը նրա բնակիչներին տալիս է որոշակի իրավունքներ և արտոնություններ: Դրանք շարադրվելու են Խաղաղության համաձայնագրում, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի բնակիչները ունենում են ժողովրդավարական հասարակության մեջ սոցիալական ու տնտեսական կենսագործունեությունն ու անվտանգությունը պաշտպանելու և վերահսկելու իրավունք: Լեռնային Ղարաբաղի բնակիչների իրավունքներն ու հիմնարար ազատությունները հարգվում են»: Վերլուծելով մադրիդյան փաստաթղթի համապատասխան դրույթը, այս առթիվ «Քաղաքական հետազոտությունների ակադեմիա» ՀԿ նախագահ Ալեքսանդր Մանասյանն իրավամբ նկատում է. «Բայց ո՞վ ասաց, որ սոցիալական ու տնտեսական կենսագործունեության իրավունքը խլված է ԼՂՀ ժողովրդից, որ շնորհվի կամ վերադարձվի նրան, ո՞վ ասաց, որ ԼՂ ժողովուրդը այսօր հրաժարվել է միջազգային իրավունքից, կամ հակառակը՝ միջազգային իրավունքը մինչև խնդրի կարգավորումը երես է թեքել ԼՂ ժողովրդից: Դրանք մարդու ու մարդկանց հանրությունների անկապտելի իրավունքներ են և ոչ մեկին դրանք նրանցից օտարելու կամ մեծահոգաբար շնորհելու արտոնություն չի տրված: Դա այն է, ինչ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը մյուս բոլոր ժողովուրդների պես ունի, ինչպես ամեն ղարաբաղցի ունի ամեն մի եվրոպացու պես, և նրան հարկ չկա տալու այն, ինչ նրան տրված է բնությունից, օրինակ, շնչելու և արտաշնչելու, իր շահերը պաշտպանելու (այդ թվում և զինված պայքարով) իրավունքները»[3]:

Այնուհետև փաստաթղթում գրված է. «Լեռնային Ղարաբաղի բնակչությունը՝ միջանկյալ շրջանում Լեռնային Ղարաբաղը կառավարելու նպատակով, իրավունք է ստանում ընտրել իշխանության մարմիններ, որոնք իրականացնում են օրենսդիր և գործադիր իշխանություն Լեռնային Ղարաբաղի ներքին հարցերում: Արդարադատությունն իրականացնելու նպատակով Լեռնային Ղարաբաղը իրավունք ունի հիմնել դատարաններ: Լեռնային Ղարաբաղի պաշտոնյաները արտաքին շփումներ իրականացնելու լիազորություններ կունենան այն ոլորտներում, որոնք սահմանվում են Խաղաղության համաձայնագրով»:

Այս առթիվ Ա. Մանասյանը նորից նկատում է. «Այստեղ ևս նախատեսվում է ԼՂ ժողովրդին տալ այն, ինչ ինքն արդեն ունի և ինչ իրեն հասնում է ըստ միջազգային իրավունքի: ԼՂՀ քաղաքացիները 1991թ. անկախության մասին հանրաքվեից ի վեր բազմաթիվ անգամ մասնակցել են ընտրությունների՝ ձևավորելու համար կառավարման տարբեր մակարդակների իշխանական մարմինիններ՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից սկսած մինչև խորհրդարանական ու նախագահական ընտրությունները: Քիչ է ասել, որ դրանց ընթացքին հետևած միջազգային կառույցներն ու հասարակական կազմակերպությունները հիացել են այդ ընտրություններով և օրինակելի համարել նույնիսկ Եվրոպայի համար: Իրողությունների այդ խորքի վրա ինչ է նշանակում *միջանկյալ շրջանում* ԼՂ ժողովրդին տալ ընտրելու իրավունք, երբ նույնիսկ արգելավայրերի բնակիչներից, իսկ որոշ դեպքերում նաև բանտարկյալներից չի խլվում այդ իրավունքը: Բայց մյուս կողմից զավեշտալին այն է, որ դեռևս 1992 թ. մարտի 24-ին ԵԱՀԽ կողմից ընդունված փաստաթղթում ձևակերպված է ԼՂ ժողովրիդի՝ ազատ ընտրություններով այնպիսի իշխանություններ ունենալու իրավունքը, որոնք որպես շահագրգիռ կողմ պիտի մասնակցեն Մինսկի խորհրդաժողովին: Մոռացկո՞տ են փաստաթուղթ կազմողները, թե մեր

[1] www.panorama.am/am/world/2013/03/13/argentina-president/

[2] Այդպիսի ձևակերպումներ են առկա Մադրիդյան և Կազանյան կոչված փաստաթղթերում, որոնք ոչ պաշտոնապես հարապարակվել են Հայկական ուսումնասիրությունների ԱՆԻ կենտրոնի կողմից: Տես՝ http://www.aniarc.am/2016/04/13/madrid-principals-armenian-text/, http://www.aniarc.am/2016/06/23/kazan-document-23-june/

[3] Տես՝ Մանասյան Ա., Ի՞նչ է ասված այսպես կոչված մադրիդյան փաստաթղթում կամ ի պաշտպանություն իշխանությունների ու «Սասնա Ծռերի», http://www.ditaket.info

հիշողությունն են ստուգում: Պարզվում է՝ մոռացկոտ չեն: Հաջորդ կետով նրանք որպես նորություն վերհիշում են այդ հանգամանքը...»[1]:

Իսկ հաջորդ կետում հետևյալն է նշված «*Լեռնային Ղարաբաղի միջանկյալ իշխանությունները կարող են ունենալ դիտորդի կարգավիճակ ԵԱՀԿ այն նստաշրջաններում, որոնցում քննարկվում են անմիջականորեն Լեռնային Ղարաբաղին վերաբերող հարցեր: Նրանք կարող են անդամակցել միջազգային այն կազմակերպություններին, որոնցում միջազգայնորեն ճանաչված լինելու կարգավիճակը նախապայման չէ:*

Լեռնային Ղարաբաղն իրավունք է ունենում ստանալ արտասահմանյան երկրների և միջազգային կազմակերպությունների ֆինանսական օժանդակություն՝պայմանով, որ այդ օժանդակությունը նախատեսված լինի մարդու իրավունքների, խաղաղ տնտեսական և ժողովրդավարական զարգացման, մշակութային և առևտրային կապերի համար կամ հիմնական մարդասիրական պահանջների բավարարմանը:

Նորից մեզ նվիրվում է այն, ինչն ամրագրված է 1992թ. ԵԱՀԽ կողմից ընդունված փաստաթղթում և միջազգային իրավունքի հանրահայտ սկզբունքներում: Եվ դա կատարվում է ոչ թե հենց այնպես, այլ հայկական կողմից իրականացվող լուրջ զիջումների դիմաց, որի վերաբերյալ ձևակերպումն արդեն իսկ արձանագրված է **Ազատ կամարտահայտություն** ենթավերնագրի ներքո, որտեղ Լեռնային Ղարաբաղ աշխարհագրական հասկացությունը նույնացվում է ԼՂԻՄ-ի հետ, դրանից բխող վտանգավոր հետևանքներով:

Ազատ կամարտահայտություն

«Լեռնային Ղարաբաղի իրավական վերջնական կարգավիճակը որոշվում է Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատ կամարտահայտության միջոցով: Քվեարկության ժամկետներն ու մանրամասները կողմերը համաձայնեցնում են ապագա բանակցություններում: Լեռնային Ղարաբաղի բնակչություն ասելով հասկացվում է 1988թ. ազգային համամասնությունով ԼՂԻՄ-ում ապրող բոլոր ազգերը այնպիսի էթնիկ համամասնությամբ, ինչպես եղել է մինչև հակամարտության սկիզբը: Քվեարկության ժամանակ ապագա կարգավիճակի հարցի կամ հարցերի ձևակերպման սահմանափակում չի լինելու և կարող է թույլ տալ յուրաքանչյուր կարգավիճակի հնարավորություն[2]»:

Նախ նշենք, որ Մադրիդյան փաստաթղթի սկզբնական տարբերակում «հետաձգված հանրաքվեի» վերաբերյալ դրույթները ամրագրված էին փաստաթղթի առաջին կետում: Հայկական կողմն այն ընդունել էր որպես հիմք հետագա բանակցությունները շարունակելու համար, իսկ ադրբեջանական կողմը՝ մերժել: 2011թ. «մադրիդյան սկզբունքների» հիման վրա Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ կողմերին է ներկայացվել «կազանյան» փաստաթուղթը, որում կարգավիճակի վերաբերյալ դրույթներն արդեն հետ էին տարվել և ստացել այն տեսքը, որը ներկայացրել ենք: Հայկական կողմը նորից այն հիմք է ընդունել բանակցությունների հետագա շարունակման համար: Ադրբեջանական կողմը նույնպես այն ընդունել էր որպես բանակցային գործընթացի հիմք, այնուհետև տասը առարկություն ներկայացրել՝ գործնականում մերժելով «կազանյան» առաջարկությունները[3]:

Եվ այսպես, ո՞րն է «հետաձգված հանրաքվեի» իրական նպատակը և ինչպիսի վտանգներ է պարունակում այն մեզ համար: Առաջին հայացքից նոր հանրաքվեի կազմակերպումը որևէ իրական վտանգ չի ներկայացնում, մանավանդ եթե հաշվի առնենք, որ ազատ ու անկախ ապրելու արցախահայության կամքն անշրջելի է, ենթակա չէ կասկածի և նրա արդյունքներն այդ առումով ակնհայտ են: Սակայն տեսականորեն նոր հանրաքվեի անցկացումն ընդհանրապես կասկածի տակ է դնում Արցախի Հանրապետության 25-ամյա գոյության ու արցախահայության՝ իր ճակատագիրն անկախ տնօրինելու նպատակով բազմիցս ցուցաբերած կամարտահայտության, այդ թվում նաև տեղական և կենտրոնական մարմինների ընտրությունների օրինականությունը: Բայց գործնականում իրական վտանգը ոչ միայն նոր հանրաքվեի կազմակերպման այլ «հետաձգված հանրաքվեի» մեջ է: Դա էր գլխավոր պատճառներից մեկը, որ եթե «մադրիդյան» անվանումը ստացած փաստաթղթի սկզբնական տարբերակում հետաձգված հանրաքվեի վերաբերյալ դրույթները տեղադրված էին առաջին կետում, ապա դրա նորացված կամ «կազանյան» փաստաթղթում Բաքվի պահանջով դրանք տարվել են հետ և կատարվել որոշակի այլ փոփոխություններ:

Բանն այն է, որ ադրբեջանական կողմը քաջ գիտակցում է, թե ինչպիսինն է լինելու և ներկայիս, և 1988 թվականի դրությամբ գոյություն ունեցող ազգաբնակչության ընդգրկմամբ կազմակերպվելիք հանրաքվեի արդյունքները: Այդպիսի հանրաքվե 1991-ին տեղի է ունեցել և նրա արդյունքները հայտնի են, որի մասին վերն արդեն նշվել է, և շեշտվել, որ նույնիսկ բոլոր ադրբեջանական թուրքերի ԼՂՀ անկախությանը դեմ քվեարկելու դեպքում, նրա արդյունքները չէին փոխվի: Ակնհայտ է նաև, որ ադրբեջանական կողմը զրկված է այդ հարցում արցախահայության քվեն ստանալու հնարավորությունից, հենց Բաքվի՝ հայ բնակչության նկատմամբ շարունակաբար իրականացվող հայատյաց քաղաքականության պատճառով: Հետևաբար, անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել, որոնք նման հանրաքվեի կազմակերպումը կհետաձգեն անորոշ ժամանակաշրջանով, նպաստավոր պայմաններ ստեղծելով Բաքվի հետագա հավակնությունների համար: Այդպիսիք կարող են լինել ինչպես ուժի ցուցադրման, այնպես էլ տարբեր այլ մեթոդներով բնակչության էթնիկական կազմը հօգուտ Ադրբեջանի փոխելուն ուղղված քայլերը:

Եթե մինչև ապրիլյան իրադարձությունները հայկական պաշտոնական շրջանակներում այս հարցի վերաբերյալ առկա էր համաձայնողական դիրքորոշում, ապա քառօրյա պատերազմը վեր հանեց դրա վտանգավորությունը,

[1] Նույն տեղում
[2] Տես http://www.aniarc.am/2016/06/23/kazan-document-23-june/
[3] Այդ մասին մանրամասն տես՝ Հակոբյան Թ., Կազանի փաստաթղթում Ադրբեջանի համար անընդունելի հիմնական կետերը, http://www.aniarc.am/2016/06/23/kazan-document-23-june/

փոխելով հետաձգված հանրաքվեի վերաբերյալ պաշտոնական շրջանակների դիրքորոշումը: Մասնավորապես ՀՀ ԱԳ փոխնախարար Շավարշ Քոչարյանը 2016թ. ապրիլի 21-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ խոսելով այդ մասին նշեց, որ հետաձգված հանրաքվեի վերաբերյալ միջնորդների առաջարկի իմաստը կայանում է նրանում, որ Ադրբեջանի իշխանությունը կարողանա փրկել իր դեմքը և ներկայացնել իր հասարակությանը հանրաքվե անցկացնելու անհրաժեշտությունը: Ընդ որում, փոխնախարարը կարծում է, որ հանրաքվեի արդյունքը, նախապես համաձայնեցված պայմաններից ելնելով, գրեթե լիովին կանխատեսելի է: Սակայն, նրա խոսքով, ժամանակը ցույց տվեց, որ Բաքուն այդ ժամանակն օգտագործում է ոչ թե իր դեմքը փրկելու և հասարակությանը հանրաքվեի անխուսափելիությունը ներկայացնելու համար, այլ գործում է լրիվ հակառակ ուղղությամբ:

«Այս հարցում նման դիրքորոշումը ստիպում է բանակցություններ վարել այլ մոտեցումների շուրջ: Ընդ որում, չի կարող գոյություն ունենալ այնպիսի դիրքորոշում, որն Ադրբեջանը կարողանա ընկալել որպես իր սանձազերծած ագրեսիայի խրախուսում: Մենք հետևողական կլինենք այդ հարցում»,– ասել է Շ. Քոչարյանը[1]:

Արդյո՞ք սա նշանակում է, որ փոփոխվել է սեփական շահերին հակասող փաստաթղթերի հիմքի վրա բանակցությունները շարունակելու մեզանում արմատավորված վտանգավոր պրակտիկան: Ժամանակը ցույց կտա: Բայց, որ հակամարտության կարգավորման ուղղությամբ իրականացված քայլերը և դրանց արդյունքում ծնված փաստաթղթերը հիմնախնդրի իրավական փաստաթղթերից չեն բխում, այլևս ոչ մեկի համար գաղտնիք չէ, ինչպես այլևս գաղտնիք չէ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության իրական նպատակները: Որքանո՞վ կհաջողվի հայկական կողմերին Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված հետագա դիվանագիտական քայլերում առաջ մղել սեփական շահերը, նույնպես ժամանակը ցույց կտա: Սակայն ակնհայտ է, որ դա կախված կլինի նաև այն բանից, թե ինչքանով ենք մենք կարողանում քաղաքականությունը որպես հնարավորինի արվեստ օգտագործել հիմնախնդրի իրական իրավական կերպարը կարգավորման գործընթաց ներբերելու և միջազգային հանրությանը մատուցելու համար:

Աղբյուրներ և գրականություն

1. ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, g. 2, գ. 332, թ. 10-11
2. Աբրահամյան Հ., Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991 թ. օգոստոս - 1992 թ. հունվար). Փաստաթղթեր, Երևան 2011:
3. Փաշայան Հ., Բալայան Լ., Արցախի անկախացումը՝ ազգերի ինքնորոշման դասական օրինակ, Գլոբուս, թիվ 7(76):
4. Статус Нагорного Карабаха в политико-правовых документах и материалах. Ереван, 1995г.
5. Тодуа З., Экспансия исламистов на Кавказе и в Центральной Азии. М., 2016.
6. www.panorama.am/am/world/2013/03/13/argentina-president/
7. http://www.aniarc.am
8. http://www.ditaket.info
9. http://newsarmenia.am/am/news/nagorno_karabakh/artsakhum_hetadzgvats_hanraqvei_antskatsman/

[1] http://newsarmenia.am/am/news/nagorno_karabakh/artsakhum_hetadzgvats_hanraqvei_antskatsman/